

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1/7.3

27-ը սեպտեմբերի 2012 թվականի

ՌԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ, ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՌԴ գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտի տնօրեն Վիկտոր Պյոտրի Իվաննիկովի, ԵՊՀ ռեկտոր Արամ Հրաչիկի Սիմոնյանի և ՀՀ ԳԱԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի գիտական քարտուղար Հարություն Իշխանի Ավետիսյանի միջև 26.09.2012թ. կայացած հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները՝

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ 2009թ. սեպտեմբերի 21-ին ստորագրված թիվ 009-09-01 պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտի արդյունքում գոյացած մնացորդային ֆինանսական միջոցները ուղղվում են Երևանի պետական համալսարանի համակարգային ծրագրավորման լաբորատորիաների՝ ակադ. Վ. Պ. Իվաննիկովի գիտական ղեկավարության ներքո անցկացվող ծրագրերի ֆինանսավորմանը:
2. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում ԵՊՀ-ի կողմից կատարվող վերադիր ծախսերի չափը որոշվում է համապատասխան համաձայնագրերով, որոնք, սակայն, չեն կարող գերազանցել իրականացվող աշխատանքների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:
3. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքներից ավելացված արժեքի հարկ չի գանձվում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան